

Յ-ը անց է կացնում խտոր և տաղնապալի օրերը։ Քշնամական բանակը զլուխ է բարձրացնում Նրա զեմ՝ խափանելու արտասահման զնալու գործը։ Նրա և նազարյանի անունից նամակներ են հորինվում։ Նայրանդյանի «Հիշատակարանի» սպազրությունից հետո «Մեզու Հայաստանի» էջերում Մկայորդին հանդես է գալիս նայրանդյանի և նազարյանի դեմ, ծագրում նրանց բարեկամությունը։ Գեպրեբի այս ընթացքից կրեում է, որ Վարչամյանի նամակը չէր կարող նայրանդյանի ձեռքը ընկած լինել։ Ուրեմն պետք է ենթադրել, որ նազարյանը հանդես է եկել նաև կոմս էմանուելի անունից, քանի որ նամակը ուղղված է եղել նրան։ Մանոթությունների բովանդակությունն էլ ինքնին թեյաղրում է այդ միտքը։

Այսպիսով, անդրազանալով կոնկրետ մեզ հետաքրքրող հարցին՝ Վարչամյանի ստորագրությամբ «Հյուսիսափայլում» սպազրած նամակին, գտնում ենք, որ այդ նամակը կապ չունի նայրանդյանի անվան հետ։ Նա պատկանում է Վարչամյանին և հարկ է ուղղել սխալը, հանելով այն նայրանդյանի երկերի ժողովածուի երկրորդ հատորից։

Թ. ՆԱԼԻՄՅԱՆ

#### ՍԻ ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ԸԻՆ ԵՐԳԱՐԱՆԻ ԼԳԱՍԻՆ

Մեր հին գրականության հարուստ ժառանգության մեջ ուրույն տեղ է զբաղում V—IX գարեբի քնարերգությունը, որն անհամեմատ ավելի քիչ է հետազոտված։ Ընդհատ է, այն հիմնականում բաղկացած է հոգևոր երգերից, սակայն նրա լիարժեք գնահատությունը հայագիտության համար էական նշանակություն ունի։ Առանձնապես անմխիթար է Շարակնոց կոչված ժողովածուի պիտական հրատարակության և հանգամանալից ուսումնասիրության գործը<sup>1</sup>։

Այս առումով վերին աստիճանի ուշադրությամբ են Մաշտոցի անվան Մատենադարանի Ն՝ Ն՝ 9838 և 6885 ձեռագրերը, որոնցից այստեղ կփորձենք ամփոփ դժերով ներկայացնել միայն վերջինի (Ն՝ 6885) մոտավոր պատկերը։ Դա իրոք երգերի մի հազվագեղ ժողովածու է՝ արժանի հատուկ ուշադրության։ Այն Մատենադարան է բերվել 1914 թ. կիս անապատից, ուր կրել է 179-րդ համարը։ Նրա մասին սպազիր գրականության մեջ, որքան հայտնի է մեզ, ոչ մի խոսք գեղես չի եղել։ Վերջերս Մատենադարանի վաղամեծիկ գիտ. աշխատող Վ. Ինորգյանը՝ իրեն հանձնարարված շարակնոցների մատյան-տախտակները կազմելիս, այդ ձեռագրի դիմաց կատարել է հետևյալ արժեքավոր նշումը. «Ո՛չ սովորական և ո՛չ էլ անսովոր տիպերին նման չէ»<sup>2</sup>, նկատել տալով նրա խկապես ոչ սովորական լինելը։

Ն՝ 6885 ձեռագիրը գրված է խոշոր բուրգրով, թղթի վրա, XIII դարում. թերթեր ընկած լինելու պատճառով գրված է խորագրից և հիշատակարանից։ 41ա թերթում առկա փոքրիկ հիշատակագրությունից երևում է, որ գրիչը (գույն ստացողը) կոչվել է Կարապետ։ Այդ ձեռագիրն այժմ բաղկացած է 155 թերթից և բովանդակում է հետևյալ նյութերը.

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմ., հատ. 1, 1944, էջ 471։

<sup>2</sup> Մատենադարան, Ձեռագրատուն, մատենագիտական մատյանների ֆոնդ։

ա) 1ա...Յորժամ դաստուած... բ) 19բ Չամենայնն ըստ... գ) 24ա Յառաջ քան... դ) 43ա Առաջնորդեայ ինձ... ե) 46ա Սով ալեկոծեայ... զ) 46բ Հայր երկնաւոր... է) 56բ Եկեալ ի Քեթանիայ... ը) 60բ Այսաւր զայստեամբ քնախայաւիտեան բանին... թ) 67ա Քաղաւոր երկնաւոր... ժ) 72ա Անհասանելին եկեալ... ձ) 74ա Հրաշափառ է խորհուրդ... ժբ) 77ա Յետ ընթրեացդ... ժգ) 81բ Ընթրեացդ խորհրդոյ... ժդ) 82բ Կարապետ, կարապետ... ժե) 85ա Չաշխարհական խնդութիւնն... ժզ) 115բ Այսաւր զհրաշալի... ժէ) 117ա Խաղաղարար տիեզերաց... ժր) 121բ Երեւի տէրն այսաւր... ժթ) 127ա Լուսաւորեայ կաթուղիկէ... ի) 137բ Հրաշափառ ճղնութեանցն... իա) 147բ Որպէս յետ աստուածասէր թաղաւորին... Վերջը՝ 154բ (պակաս)։

Այս հուշարձանի ուսումնասիրութեան համար կարևոր նշանակություն ունի նրանից պակասող թերթերի քանակի ճշտումը։ Չեռագիրն այժմ ունի 21 պրակ, ամեն մի լրիվ պրակում՝ 8 թերթ, երևում է, որ նյութը շարունակված է եղել նաև 22-րդ պրակում, որից ոչ մի թերթ չի պահպանվել։ Նրա փոխարեն ավելացված են ուշ շրջանի այլ թերթեր՝ այլ բնագրերով։ Ամբողջ ժողովածուի տոնների կարգը ցույց է տալիս, որ վերջից այնքան էլ շատ երգեր չեն պակասում։ Ուստի կորած 22-րդ պրակի մի մասում պիտի շարունակվեն բնագրերը, իսկ մյուս մասում՝ ցանկը և հիշատակարանը։ Այսպիսով, կարող ենք այս պրակի հաշվին ընդունել առնվազն 4—5 թերթ բնագրային կորուստ։ Բացի դրանից, առկա 21 պրակներից, ըստ մանրամասն հաշվումների, պակասում է 13 թերթ՝ բնագրերով։ Հետևապես ամբողջ ձեռագրից պակասող թերթերի քանակը կլինի 21 թերթ, որից առնվազն 17—18-ը՝ բնագրային։

Այդ հաշվումներից միաժամանակ երևում է, որ պակասող թերթերի վրա առանձին տոների սկսվածքներ և խորագրեր չեն եղել, բացի սկզբի պրակից, ուր հավանաբար եղել է մի խորագիր («Կանոն Մենդեան»)՝ և վերջին 22-րդ պրակից, որի մասին որոշակի բան ասել չենք կարող։

Համեմատելով սույն ժողովածուն ծանոթ շարակնոցների հետ, նկատում ենք բազմաթիվ էական տարբերություններ։ Այսպես օրինակ, այս ժողովածուի բովանդակած կարգերից և ոչ մեկը չկա ծանոթ շարակնոցներում։ Դրանք բոլորն էլ նորություն են նրանց նկատմամբ։ Այլ կերպ ասած, դրանք բոլորն էլ կարող են դիտվել որպես պարականոն շարականներ։ Հաջորդ կարևոր տարբերությունն այն է, որ № 6885 ձեռագրում իսպառ բացակայում է «շարական» բառը, որը միաժամանակ խոսում է նրա հնություն մասին<sup>6</sup>։ «Շարական» բառի փոխարեն այստեղ օգտագործված են «Կարգ» և «Կանոն» բառերը։ № 6885 ձեռագիր ժողովածուն ծանոթ շարակնոցներից տարբերվում է նաև նրանով, որ այստեղ բոլորովին չեն հանդիպում շարակնոցներում ընդունված պատկերները («Հարց», «Գործք», «Մեծացուցէ» և այլն)։ Այնուհետև, ձեռագիր ժողովածուն շունի ձայնագրված կամ խաղավորված և ոչ մի բնագիր, մինչ ծանոթ շարակնոցները առանց դրանց չեն կարող հանդիպել։ Չեռագրում այդ առու-

3 Այս կանոնի դիմաց կա փակագիր, որը կարող է վերծանվել որպես «Աղանա»։

4 Այս խորագիրը նոր գլխագրի տակ է, կնշանակի ժողովածուն ըստ այդմ բաժանված է եղել երկու մասի։

5 Գ. Ավետիսյանի «Բացատրութիւն շարականաց» (Վենետիկ, 1814, էջ 2) գրքից և այլ տվյալներից երևում է, որ այստեղ ևս յպիտի լինելին Աստվածամոր ծննդյան կարգին վերաբերող երգերը։

6 Այդ պատճառով մենք սույն ձեռագիրը կոչում ենք ոչ թե Շարական, այլ Նրգարան։

մով ուշագրավ է հանրահայտ ութ ձայների համապատասխան սշումների (ԱՁ, ԱԿ, ԲՁ, ԲԿ և այլն) առկայությունը: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ ձևադրում Ապաշխարության կարգի «Օրհնութեան փառք» (օրհնափառք) բաժինը հարմարեցված է Աստվածաշնչի 10 օրհնությունների հիման վրա սահմանված կարգին<sup>7</sup>: Խոսքն, իհարկե, երգերի բնագրերի մասին չէ, այլ սահմանված կարգերի, պատկերների: Այստեղ նորություն է «ՀԲ» օրհնությունը (աշուճաբարձամամբ ձևաց մերոց պատարագ ընկալ գերեկորիս և առաքեայ ի մեզ զմեծ քո զողորմութիւնդ): Դրա փոխարեն այստեղ չկան նշված տասը օրհնություններից երկուսը՝ «Ման» (ամաներուր և տնսէք...) և «Ի նեղ» («Ի նեղութեան իմում»...): N° 6885 ժողովածուն և սովորական շարակնոցները տարբերվում են նաև իրենց բովանդակած կանոնների քանակով. եթե վերջիններս ունեն շուրջ 130 կանոն, ապա ձևադրում նրանց քանակը հավասար է 21-ի, որը ձևադրի ամբողջական լինելու դեպքում 25-ի հասնել չէր կարող: Կարևոր է նաև ժամանակի հարցը. եթե սովորական շարակնոցներն ամփոփում են V—XIV դարերում ստեղծված գործեր, ապա ձևադրի նյութերը, հիմնականում գալիս են IX—X դարերից: Սովորական շարակնոցների բովանդակած երգերի հեղինակների մասին, վերջին հաշվով, կան որոշ տեղեկություններ, մինչդեռ այդպիսի տեղեկություններ չկան այս ձևադրում<sup>8</sup>: Սովորական շարակնոցներում երգերին հատուկ է հռատուն կառուցվածքը, ինչպես նաև կրկնակների յուրատեսակությունը: Դրանք N° 6885 ժողովածուի մեջ բացակայում են: Այստեղ տների քանակը առանձին երգերում տարբեր է և միօրինակության որևէ ձգտում չի նկատվում: Ինչ վերաբերում է կրկնակներին, ապա այստեղ, N° 6885 ձևադրում կրկնվում է սովյալ տողը նույն տեղում<sup>9</sup>, մի բան, որը օրինական չէ սովորական շարակնոցներում: Հավանական է, որ երգարանի բուն մասի հեղինակը և նրա ամբողջության խմբագիրը նույն անհատն է:

Այս առումով որպես լրացուցիչ փաստեր կարելի է հիշատակել հետևյալները: Բնագրում հաճախ հանդիպում ենք «Ի» նախդրի անտեղի կամ անսովոր գործածության մի շարք դեպքերի («Ի յայնժամ»—32ա, 32բ, 40բ: «Ի յորժամ»—32ա, 37բ, 41բ, 103ա, 111ա, 112ա: «Ի և»—61ա, 121ա և այլն): Այդ նույն ոչ տարածված եղանակով է գործածված նաև «Յափշտակել» բառը («Զիս յափշտակեայ ի վտանգէս»—46ա: «Յափշտակեայ զՂաղարոս ի թաղմանէ»—60ա: «Զօրհնութիւն յափշտակեսցորք»—143ա): «Մովսէս» անունը համարյա միշտ գրված է «Մուսես» ձևով: Այս բոլոր դեպքերում առկա է որոշակի անհատի նախասիրությունն ու գիտելիքը: Նույնը կարելի է ասել նաև հետևյալ երևույթի մասին. երգարանում ամփոփված ստեղծագործությունների որոշ մասը գրված է ուրիշների համապատասխան գործերի նմանությամբ. երբեմն էլ նրանց տողերի ու տների անմիջական օգտագործմամբ: Այդպիսի առնչու-

7 Վերջինիս մասին տես Գ. Ավետիսյան, Բացատրութիւն շարականաց, Վենետիկ, 1814, էջ 676:

8 Սրկու բանաստեղծության մեջ նկատելի են ակրոստիքոսային հետքեր. 67ա—68ա թերթերում («Թագաւոր երկնաւոր...»), որ սկզբնատառերը շարահյուսում են «Թեոդորոս», իսկ երկրորդը՝ 148ա-ում՝ հողելով «Թողորոս»: Վերջինը կարող է կապվել նաև Թեոդորոս («Թէոդորոս») թագավորի հետ, որի մասին խոսվում է նախորդ տողերում: Առաջինն էլ զգալի ազդակցված է Մուսէս կամ Մուսայի փաստեր գտնել եգիպտացույթյան համար:

9 Ձևադրում կամ ուղղակի կրկնված է սովյալ տողը, նրա սկիզբը կամ էլ լուսանցքում նշված է «Կ», որ նշանակում է կրկնել:

թյուններ ենք նկատում, օրինակ, մաշտոցյան Ապաշխարության<sup>10</sup>, Սահակ Պարթևի՝ Ղազարու հարության<sup>11</sup> երգաշարքերի և այս նոր ժողովածուի համապատասխան կանոնների միջև, ուր կան որոշ հատվածներ էլ՝ առնված Երզրկոցից<sup>12</sup>, Թեոդորոս Քոթենավորի ճառերից<sup>13</sup> և այլ աղբյուրներից:

Չնայած N° 6885 ձեռագիրը գրչությամբ կապվում է XIII դարի հետ, սակայն, ինչպես նշվեց, նրա բովանդակությունն առավել հին ծագում ունի: Հնագրական տվյալներից և գրչական աշխատանքներից երևում է, որ նրա հիմքում ընկած է եղել մի հին օրինակ, որի առանձին բառերը տեղ-տեղ մաշված և անբնթեղանելի են եղել: Այդպիսիներից է 40ա երեսում «կենդան յ|| տաղնապաւ» բառերի միջև եղած մեկ բառի պակասը և նրա համար ազատ թողնված տեղը, 69ա երեսում «բա յ| դրութեամբ» բառի միջից որոշ տառերի պակասն ու նրանց համար բաց թողնված տեղը (հավանաբար «Բաղադրութեամբ») և այլն: Կան նաև այնպիսի տեղեր, ուր բաց է թողնված եղել ավելի մեծ տարածություն, որը հետո լրացված է, բայց այդ լրացումը չի գրավել բաց թողնված ողջ տարածությունը, որի պատճառով նորից ազատ տեղեր են մնացել (15ա, յ26բ և այլն): Կան բազմաթիվ երկաթագիր բառեր, կիսաբառեր (օրինակ, «սևս — 100ր», «սևսաց» — 125ա), որոնք ցույց են տալիս, թե նախագաղափար օրինակը եղել է երկաթագիր: Այս ձեռագրում «է» և «և» տառերը շինգանագանվում միմյանցից. դա ևս դալիս է նախագաղափարից և խոսում նրա հնություն մասին: Այդ են ասպայուցում նաև երգարանից իսպառ բացակայող խազերը, որոնք XI—XIII դարերում անպայման պիտի երևան գային առատորեն. մանավանդ նման երգարանի մեջ: Կան այս կարծիքը հաստատող նաև ուրիշ փաստեր, որոնք քննվելու են ստորև:

Միաժամանակ պետք է նշել, որ այդ ժողովածուի երևան գալը VIII դարից այն կողմ էլ անցնել չի կարող, որովհետև հատուկ «Կարգ»-երի և «Կանոն»-ների առկայությունը, շարքերից մեկի հարմարեցումը Աստվածաշնչի տասր օրհնություններին («նայ», «զիհ», «հաստ», «զշ» և այլն) գալիս ևս Ստեփանոս Սյունեցուց, որը, ինչպես հայտնի է, VIII դարի գործիչ էր և այդ ձևերը նրա ձեռքով են մտել հոգևոր երգարանների մեջ<sup>14</sup>: Նույն կարծիքի օգտին է խոսում նաև Թեոդորոս Քոթենավորի ճառերից օգտվելու հանգամանքը: Կան և ուրիշ փաստեր:

Այսպիսով, մնում է տվյալ երգարանի ծագման ժամանակը որոնել VIII—X դարերի միջև: Ուշագիր զննելով երգարանի բնագրերը, բարբախտաբար, նրանցից մի քանիստ գտնում ենք օժանդակ տվյալներ, որոնք կապվում են IX դարի կամ X դարի սկզբի հետ: Այսպես, օրինակ, երգերից մեկում, հեղինակը դիմելով աստծուն, ասում է.

<sup>10</sup> Այդ մասին կխոսվի ստորև:

<sup>11</sup> Այսպես, օրինակ, տպագիր շարակնոցում (Կ. Պոլիս, 1853, էջ 258) կարդում ենք. «Որ ի շորերկերպեան կենդանեաց փառարանես ի բարձունս, այսօր մարդասիրապէս փրկիչ ի Բեթանիա երթալ յանձն առեր...»: N° 6885 ձեռագրում գրան համապատասխան կա, «Որ ի շորերկերպեան կենդանեաց բարձրացեալ և ի հրեշտակաց փառարանիր, այսօր ի Բեթանիայ եկիր անմահութեանց տուող...» (57ր):

<sup>12</sup> Չեռագիր N° 6885, թերթ 69ր. «Սեւա եմ ես և գեղեցիկ...»:

<sup>13</sup> Օրինակ, Թ. Քոթենավորի մոտ կարդում ենք. «Սակա այսորիկ յամլնադիտլն աստուծոյ Լրեսաց հարթուցեալ սաղարթապատ եղանիր...» և այլն (տե՛ս «Զովհաննու Օձնեցոյ Մատենապրոգրիւմ», 1833, էջ 149): N° 6885 ձեռագրում կարդում ենք. «Սակա այսորիկ և յամլնիմաստլն աստուծոյ երեսաց սորտուցեալ սաղարթապատ եղանելով...» և այլն (թերթ 69ր):

<sup>14</sup> Կ. Ավետիսյան, Ոսկանություն շարակնաց, Վենետիկ, 1814, էջ 671—678:

Պարզևեայ զաւրուրիւն բազաւորաց և իշխանաց մեռոց,  
 Չի զանաւստուած աստուածածանաւորութիւնն որդւոցն Հազարու վանեցիկն  
 և զեկեղեցի քո ազատեցիկն յայսպիսու բոնութենէ<sup>15</sup>:

Այստեղ միանգամից հանդիպում ենք երկու կարևոր տեղեկության: Նախ, «խազաւորաց և իշխանաց մեռոց» արտահայտութիւնից երևում է, որ այն ժամանակ Հայաստանում եղել են մի քանի թաղավորներ: Այնուհետև, նշվում է, որ այդ ժամանակ մեր երկրից պիտի դուրս վանգվեին «Հազարու» որդիները, այսինքն՝ արարները: Մի այլ երկում օտար բնակալները կոչվում են «հարաւայիկն» թշնամիներ, որը նույնպէս մատնացույց է անում արարներին:

Ահա այս և այլ փաստերը համոզում են, որ նշված երգարանը կազմվել է խմբագրվել է IX դարում կամ X դարի սկզբում, երբ, իրոք, Հայաստանում միանգամից դահ էին բարձրացել մի քանի թաղավորներ և արաբական լուծը դեռ չէր Սոբափված:

Մտնումները ցույց տվին, որ N° 6885 ձեռագիրը մասնակի աղերս ունի «Խազգիրք» կամ «Մանրուսում» կոչված անտիպ ժողովածուների հետ: Այսպէս, օրինակ, Ապաշխարության Հարցնափառերը (սկիզբ՝ «Հայր երկնաւոր...») ասկա ևն շատ խազգրքերի մեջ՝ որոշ տարբերութիւններով: Բացի դրանից, մի խազգրքի մեջ (Չեռ. N° 751, թերթ 29բ) հանդիպում է նաև Ապաշխարության օրհնափառերի շարքը (սկիզբ՝ «Առաջնորդեա ինձ...»): Պարզվեց, որ «Խազգրքերի» մեջ գտնվող «Ժամամտեր»-ը՝ նույնպէս աղերս ունեն N° 6885 ձեռագրի առանձին կանոնների հետ:

Հարց է առաջանում. N° 6885 ձեռագիրն է այդ նյութերն առել խազգրքերից, թե՛ խազգրքերն են օգտվել N° 6885 ձեռագրից: Փանի որ խազգրքերն աւելի հին են, քան XIII դարը (երբ ընդօրինակվել է N° 6885 ձեռագիրը), ուստի խազգրքերն այդ ձեռագրից չէին կարող օգտվել: Սակայն N° 6885 ձեռագիրն էլ խազգրքերից չի վերցրել իր նշված նյութերը, որովհետև նրանց մեջ կան էական տարբերութիւններ: Օրինակ, խազգրքերում սլահականված ժամամտերի մեջ գտնվող յուրաքանչյուր երկր ոչ այլ ինչ է. քան N° 6885 ձեռագրում սլահականված ամբողջական շարքերից առնված մի ցնկոր: Կնշանակի խազգրքերն օգտվել են այնպիսի հին ձեռագրերից, որոնց մեջ առկա են եղել N° 6885 ձեռագրում գտնվող շարքերը: Դա էլ իր հերթին ցույց է տալիս, որ N° 6885 ձեռագիրը XIII դարից առավել հին ծագում ունի:

Արժանի է հիշատակման նաև հետևյալ փաստը: Խազգրքերն էլ երբեմն համընկնող վերոհիշյալ երգաշարքերի մեջ ունեն այնպիսի մասեր, որոնք չկան N° 6885 ձեռագրում: Օրինակ, N° 6885 ձեռագրի և N° 751 ձեռագրի խազգրքի մեջ առկա Ապաշխարության Հարցնափառերի համեմատութիւնը ցույց է տալիս,

<sup>15</sup> Չեռ. N° 6885, թերթ 119բ—120ա:

<sup>16</sup> Այդ ժամամտերը կան նաև տպագրված ժամագրքերի և համապատասխան այլ ժողովածուների մեջ:

<sup>17</sup> Այսպէս, օրինակ, N° 6885 ձեռագրում գտնվող «Տեառն ընդ յտոաչին» նվիրված ընդարձակ կարգից է (22բ)՝ «Մերունին այսօր Սիմէոն...» ժամամուտը (տես «Ժամագիրք...», Մոսկվա, 1853, էջ 384), Ղազարու կարգից է (58աբ)՝ «Յորժամ եկեալ կենարարգ...» ժամամուտը (սպագիր, էջ 385—386), Վարդավառի կանոնից է (121բ)՝ «Օրնի տէրո այսօր» ժամամուտը (տպագիր, էջ 390), Յովհաննու կանոնից է (84բ)՝ «Ձառարնթացութիւն քո...» ժամամուտը (տպագիր, էջ 393) և այլն:

որ թե մեկը և թե մյուսը միմյանց նկատմամբ ունեն նորանոր տներ: Արդյոք այդ նոր տները խազգրքերում հետո՞ են մուծված, թե դալիս են ավելի հին աղբյուրից: Նույնը կարելի է ասել նաև ժամամտերի մասին: Խազգրքերում առկա շուրջ չորս տասնյակ ժամամտերից միայն մի տասնյակը կապ ունի N 6885 ժողովածուի բնագրերի հետ: Որտեղի՞ց են գալիս մնացած երեք տասնյակ երգերը, հնի՞ց, թե հետո են ստեղծվել: Հավանաբար այդ, հավելյալ նյութերի համար խազգրքերն ունեցել են հին սկզբնաղբյուր: Իսկ այդ սկզբնաղբյուրն էլ, ինչպես տեսնում ենք, կապում է N 6885 ժողովածուի ծագման հետ: Դա ինքնին վկայում է, որ N 6885 ժողովածուի մայր օրինակի զեմ այդ երկու-երեք շարքերն ավելի հարուստ են եղել:

Կարելի՞ է այս աճենի հիման վրա ենթադրել, թե N 6885 ժողովածուի մայր օրինակում առավել շատ կանոններ են եղել զանազան տոների վերաբերյալ: Մեզ այնպես է թվում, որ ոչև նայելով N 6885 ձևագրում պահպանված կանոնների և նրանց համապատասխան տոների կարգին, տեսնում ենք, որ այնտեղ համարյա թե ոչինչ չի պակասում (չա տ-չա տ, հնարավոր է, ասենք, մի կանոն էլ լինել ձևագրի վերջից բնկած թերթերում՝ մի ուրիշ տոնի վերաբերյալ կամ՝ Ավագ շարաթվա կարգերում լինելին նաև երեքշաբթի և շաբաթ օրերի համար կարգեր):

Այս հանգամանքը հաստատելու համար, որպես օժանդակ փաստ, կարող ենք հիշել հին տոների կարգը, որը Սահակ Պարթևի կանոնների համաձայն 13-ից չի անցնում: Կնշանակի, մինչև IX—X դարերը դրանք զարգանալով հասել են 21—23-ի, ինչպես վկայում է N 6885 ձևագիրը: Հետագայում, տոների քանակն ու նրանց նվիրված կանոններն ավելի են ճոխացել:

Այսպիսով, N 6885 ձևագիրը ստանում է մի նոր նշանակություն— հին շարակնոց: Ժողովածուների բովանդակության բնդհանուր պատկերի մասին պահպանված կազմելու առումով: Անշուշտ, այդ ժողովածուները կարող էին և մասամբ առավել ձոխ լինել, սակայն և այնպես, նրանք ավելի հարազատ կլինեին N 6885 ժողովածուի, քան մեզ առած շարակնոցային որևէ այլ խմբագրություն:

Հնդունելով, որ N 6885 ժողովածուն IX—X դարերի արդյունք է, չի կարելի ժխտել նրա մեջ նաև առավել հին ժամանակներից եկող ուրիշ նյութերի առկայության հնարավորությունը: Մենք այդ ուղղությամբ չկարողացանք որոշակի փաստեր գտնել, բացի վերևում նշված մի երեւում մուշից (տ. Քոթենավոր, Երգ երգոց), որոնք կարող էին նաև IX—X դարերում օգտագործված լինել: Ուշ շրջանի ներմուծության տպավորություն են թողնում հետևյալ հատվածի բնդգծված 4 տողերը, որոնք կարծես առնված են հատուկ տաղաչափությամբ և հանգավորմամբ գրված բանաստեղծությունից.

Կալով առ լաշիս  
երկնից բարձոտեն  
Սե հառաչմամբ ի վեր նայեր  
Սուրբ երեսն ասեր.

— Զիա ըզ զատաւորն ամենեցուն որպէս պատժապարտ դաւի...

18 Սոփերը Հայկակաթ, Բ, էջ 110—112:

19 Ձեռ. N 6885, թերթ 112ր:

Այս տաղաչափության հնագույն օրինակը մեզ հայտնի է XIII դարից՝ Սյունյաց իշխան և առաջնորդ Տէր Ստեփանոսին նվիրված անտիպ ողբից։

Քննվող ժողովածուն բացառիկ նշանակություն ունի նաև Մեսրոպ Մաշտոցի բանաստեղծությունների ուսումնասիրության կապակցությամբ։ Անկախ նրանից, որ այդ ժողովածուի մեջ չեն ընդգրկված Մեսրոպ Մաշտոցի երգերից ստեղծված շարքերը և կանոնները, մենք այդ ժողովածուի մեջ դարձյալ տեսնում ենք նրանց ազդեցության ակնբախ հետքերը։ Ահա մի քանի հատված նորահայտ ձևագրի Աղաշխարհության կանոնից.

Տէր բազումդորմ, խնայեալ ի մեղուցեալ անձն իմ,

Զի անհնարին մեղաւ անկեալ դնիմ.

Այլ դու ամենակառոյ փրկիչ.

Խնայեալ յիս և կեզո՞՞20:

Ի խորս ծովու բնկղմեցար. ով անձն իմ.

Այլ գոչեալ Քրիստոսի երկնաւոր նաւապետին.

— Տո՛ւր ինձ ձեռն, որպէս երբեմն Պետրոսի և ողորմեա՞21:

«Կցուրդ ի նոյն ձայնէ» խորագրի տակ գետեղված է լուկ հետևյալ տունը, որը ոչ այլ ինչ է, քան Մեսրոպ Մաշտոցի «Մով կենցաղոյս հանապազ գիւտ արևկոծէ...»<sup>22</sup>, «Վրտանդիմ ի բազմութենէ...»<sup>23</sup>, «Մերձ եմ յրնկղմիլ...»<sup>24</sup> և այլ երգերի վերամշակումից կերտված մի նոր երգ.

Մով արևկոծեալ տեսանեմ անհաստատ գկենցաղս իմ,

Ի շարժմանէ յանցանացս ծփիմ,

Այլ յառաջ քան գրնկղմելն,

Նախածամանեալ յանգիտութենէս որպէս գՊետրոս

Սու գիս յափշտակեալ ի վտանգէս,

Միայն փրկիչ. փա՛ո՛ւք քեզ<sup>25</sup>:

Առավել ուշադրավ է հետևյալ փաստը։ Ինչպես հայտնի է դառնում Կարապետ Սասնեցու (XI—XII դդ.) մի վկայության նոր մեկնաբանությունից, Մեսրոպ Մաշտոցն ունեցել է նուև տոանձին երգաչարք՝ նվիրված «Երից մանկանց» թեմային։ Այդ շարքը հետո տարալուծվել է նրա մյուս երգերից կազմված շարականային կանոնների մեջ<sup>26</sup>։ № 6885 ձևագրի աղաշխարհության հիմնական կանոնին կցված «Հարցնափառք»-ն իրենից ներկայացնում է վերոհիշյալ «Երից մանկանց» շարքի նմանությամբ դրված առայժմ հայտնի միակ գործը։ Ուշագրավն այն է, որ այստեղ հեղինակը հաճախ նմանվում է,

20 Ձև, № 6885, թերթ 24ր։

21 Նույն տեղում, թերթ 25ր։

22 «Շարական», Կ. Պոլիս, 1853, էջ 149։

23 Նույն տեղում, էջ 139։

24 Նույն տեղում, էջ 150—151։

25 Ձև, № 6885, թերթ 46ա։

26 Այդ մասին ունենք առանձին ուսումնասիրություն, որը տպագրվում է Մատենադարանի «Բանբեր»-ի՝ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին նվիրված համարում։

Մաշտոցին և հաճախ էլ ուղղակի օգտագործում նրա կրկնակները՝ սղումով, Օրինակ, N 6885 ձեռագրի 47ր թերթում կարգում ենք.

Ձերից մանկանցն գաւրհներգութիւնս ղեզ վերագոչեմք,  
Քազաուրիդ երկնաւոյի երկւսլագելով և գոչելով,  
Ձուք փառարանեն:

Ինչպես տեսնում ենք, վերջին տողի միտքը չի հասկացվում, այն թերի էլ Պարզվում է, որ այդ երկու բառով («Ձոր փառարանեն») ակնարկված է մաշտոցյան համապատասխան երգի կրկնակը՝ «Ձոռ փառարանեն զօրք անմարմնոյ հրեշտակաց...» և այլն<sup>27</sup>: Ահա նաև մի քանի նման ուրիշ տողեր, որոնց համապատասխան մաշտոցյան տողերը նշում ենք փակագծում. 51ր «Որ երկրրւսլագն» («Որ երկրւսլագի ի դասուց բերովբէից...»<sup>28</sup>), 52ա «Որ գազգ» («Որ գազգս որդ:ոց մարդկան...»<sup>29</sup>), 53բ «Քահանայք աստուածար» («Քահանայք աստուածարանելով, ժողովուրդը...»<sup>30</sup>) և այլն: Կնշանակի, իրոք, նշված «Հարցնափառք»-ի հեղինակը ծանոթ է եղել մաշտոցյան «Ծրից մանկանց» երգաշարքին և նրա նմանությամբ ստեղծել իր նոր երգաշարքը<sup>31</sup>: Դա ունի երկու նշանակություն. առաջին, քանի որ այդ նոր շարքը պատկանում է ավելի վաղ ժամանակների, քան X դարն է, կնշանակի դրանով ունենք մի վկայություն ևս մաշտոցյան երգերի հնության մասին: Երկրորդ, հենց այդ շարքը, որ ամբողջապես նվիրված է երից մանկանց թեմային, ցույց է տալիս, որ նրա համար հիմք հանդիսացած մաշտոցյան երգաշարքն էլ եղել է սյուրբիսի առանձին շարք: Իսկ դա նորություն է Մաշտոցի երգերի ուսումնասիրության պատմության մեջ: Մյուս կողմից էլ այդ երևույթը խոսում է նորահայտ «Հարցնափառի» հնության մասին, որովհետև նա ենթադրում է մաշտոցյան ամբողջական «Երից մանկանց» երգաշարք, որպիսին չէր պահպանվել X դարից հետո բնկած ժամանակամիջոցում: Նույնիսկ միտք է առաջանում, արդյոք այդ հարցնափառն ու նրանից առաջ գետեղված օրհնափառը իրենց որոշ մասով որևէ կապ չունեն Մաշտոցի անվան հետ:

Այժմ՝ մի քանի խոսք N 6885 ձեռագրի հիմքում բնկած ժողովածուի մասին նշվեց, որ այն, հիմնականում, պիտի շարադրված լինի IX—X դարերում: Նշվեց նաև, որ այն իր բովանդակությամբ բոլորովին նոր տեսք ունի և երկվան էր գալիս որպես եկեղեցական մի նոր երգարան: Հարց է առաջանում, ինչու է հարկ եղավ ստեղծել այդ բոլորովին նոր երգարանը:

<sup>27</sup> «Շարական», 4. Պոլիս, 1853, էջ 140:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 186:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 192:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 212:

<sup>31</sup> Այդ «Հարցնափառ»-ի մասին որոշ պատկերացում տալու նպատակով մեջ ենք բերում ձի հատված.

Առանկ. Բան արոցն Բարեկոնի,  
Քառուսգաւ շարութիւն հարաւային բոնուրեան.  
Սւ. բ. դու, տլ. ր, անեսա արաւեր գեկեղեցի Բո.  
Այլ գաւղեալ ի Բոց գրութեանց  
Եւ շիւսյ գանտանելի հոռն գրութեմն.  
Սւ մի տաւ յսլականութիւն գԲո մտաւեղութիւն.  
Միայն մարդասեր:

(Ձեռ. N 6885, թերթ 46ր):



Առավել անհասկանալի է մնում այն փաստը, որ վերջինիս կազմողը իսպառ տեղ չի տվել նույնիսկ հնից եկող և արդեն ընդունված այնպիսի երգերի, ինչպիսիք էին Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի երգերը:

Ինքնին հասկանալի է, թե որքան մեծ նշանակություն ունի N° 6885 ձևագրի հանդամանալից հետազոտությունը: Այս դործին կողմին համանման այլ ձևագրի հայտնաբերումն ու քննությունը:

«Հայկազյան բողոքի» երկհատորյակից ենթագրերի է, որ այնտեղ օգտագործած «Գանձարան» ժողովածուի մեջ առկա են եղել որոշ նյութեր, որոնք հարազատություն ունեն մեր երգարանի հետ: Դա երևում է «Բաղաձայն», «Խաւարագղեստ», «Կարապետական», «Սառագարդ», «Տնկագործութիւն» և այլ բառերի բացատրության ժամանակ մեջ բերված հատվածներից: Ցանկալի կլինեք ունենալ մանրամասնություններ նշված Գանձարանի (կամ դանձարանների) վերաբերյալ:

Նշվեց, որ N° 6885 ձևագիրը ծնվել է արարական լծից Հայաստանի ազատագրման տարիներին: Փամանակի ազատագրական ձգտումների այդ ընդհանուր ոգին իր արտացոլքն է գտել նաև սույն երգարանում:

Ժողովրդեան քում գաղաչանս ընկալ,  
մարդասէր տէր,  
Անձինք նեղեալ և հոյիք ձանձուցեալ՝  
Ցանօրինաց յաբուցելոց հ վերալ մեր.  
Աղաղակեմք առ Բեզ, Քրիստոս փրկիչ,  
Լուր զձայն աղաղակի յուսացելոյս ի Բեզ.  
Չերծոյ գմեզ հ նեղաց մերոց...<sup>32</sup>:

Այսինքն, տեր աստված, ընդունիր մեր ժողովրդի աղաչանքը. նրա մարմինը շարժարված, իսկ հոգին ձանձրացած է՝ մեզ վրա իշխող օտարների բռնությունից, լսիր մեր ձայնը և ազատիր մեզ այդ նեղիչներից:

Հեղինակը նույնիսկ դժգոհում է աստծուց, որ նա անտեսել է իրեն ասպվինածներին, նևտելով նրանց օտարների լծի տակ և բոցերի մեջ.

Առաւել քան զրոցն Բարելունի,  
Յարձուցաւ շաբուքիւն հարաւային բոնուքեան,  
Եւ, ո՞, դու, տէր, անտես արարեւր զեկեղեցի քո...<sup>33</sup>

Վերևում քննված հարցերն ու բնրված փաստերը միաժամանակ ցույց են տալիս, որ թեև N° 6885 ձևագրի ներկայացրած ժողովածուն չի արժանացել ընդունելության, բայց և այնպես մատենագրական կյանքում այն թողել է իր որոշակի հետքը: Այսպես, օրինակ, պարզվում է, որ այն առնվազն ունեցել է մի քանի ընդօրինակություն:

Ամփոփելով մեր խոսքը N° 6885 ձևագրի մասին, կարող ենք ասել, որ այն մի հետաքրքրական հուշարձան է: Նրա հանկամանալից քննությունը մեծապես կնպաստի շարականների, խազգրքերի, մաշտոցյան բանաստեղծությունների և առհասարակ մեր հին երգարանների ու երգերի գիտական ուսում-

<sup>32</sup> Ձևո. N° 6885, թերթ 46ա:

<sup>33</sup> Նույն տեղում. թերթ 17ա:

նասիրություններ: Բագի դրանից, ալդ ժողովածուն խոշոր նշանակություն կունենա նաև IX դարի և X դարի սկզբի հայ դրականության մասին պատկերացում կազմելու համար: Եթե մինչև օրս այդ ժամանակներից հայտնի էր լուր մի երկու փոքրիկ երգ, ապա այս ձևազարդ դալխս է նրանց կողքին դնելու նորանոր երգերի առնվազն մեկ ու կես տասնյակ ընդարձակ շարքեր: Հնարավոր է նաև, որ N 6885 ձևազարդ ուսումնասիրությունները ի հայտ բերեն IX—X դարերի հասարակական, դավանաբանական մտայնությունների մի նոր հանգույց ևս, որի արդյունքներից մեկն է թերևս հենց այդ նոր երգարանը: Առհասարակ բազմաթիվ ու բազմակողմանի են այդ հուշարձանի արժանիքները՝ կարոտ լուրջ ուշադրություն:

Ա. ՄԵԱՅԱԿԱՆՅԱՆ  
պատս. գիտ. գոկոտոր

### ՄԱՏԵՆԱԳՐԱՆԻ ՉԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԸ

Հայ բառարանագրությունը սկիզբ է առնում մեր դպրության ամենավաղ ժամանակներից: Հայաստանում և նրա սահմաններից դուրս գտնվող գրչության ու մշակութային գրեթե բոլոր կենտրոններում՝ Երզնկայում, Տաթևում, Դյաձորում, Վանում, Սուրխաթում, Բաղևում, Հովհանավանքում, Կաֆայում, Ջուղայում, Մեծոփա վանքում, Էջմիածնում, Երուսաղեմում, Կ. Պոլսում, Սևանում, Երևանում, Լվովում, Կամենիցում և բազմաթիվ այլ վայրերում գրքովի են գանազան բառարաններ ու բառացանկեր: Մեզ հասած միջնադարյան բառարանագրական հուշարձանների թիվն էլ վկայում է, որ բառարանները լայն տարածում են ունեցել Հայաստանում և կարևոր դեր խաղացել գիտության ու մանկավարժության մեջ: Միայն մեր մատենագրանի 650 ձևագրերում հայտնի են մի քանի տասնյակ անուն բառարաններ:

Հայ բառարանագրության վաղ շրջանի մասին մեր մատենագրության մեջ տեղեկություններ չկան: սակայն մեր հին մատյաններում առկա բառարանագրական աշխատանքի բազմաթիվ տարրերը՝ լուսանցքային, տողատակի ու հրնթացս շարագրանքի կատարված գրուսաները, օտար ու անծանոթ բառերի մեկնությունները, ստուգաբանությունները և այլն, ինչպես նաև մեզ հասած բառարանագրական հուշարձանների պատասխիկները վկայում են, որ հայ գրչության սկզբնական շրջաններում էլ բառարանագրական աշխատանքներ կատարվել են, եզրի են բառացանկեր ու բառարաններ: Մեզ հասել են հունարան շրջանի մի քանի բառացանկերի հատակտորներ, որոնք, սակայն, ամբողջական պատկերացում չեն տալիս այդ շրջանի բառարանագրության մասին: Բայց ինչպիսին էլ որ լինեն նա, իհարկե, այն չէր, ինչ դառնում է X դ. հետո:

Միջնադարյան հայ բառարանագրության խնդիրները բազմազան էին. փոքր մատչտարների, սակայն որոշակի ու գործնական: Բառարաններն ստեղծվում էին մատենագրության և հատկապես դպրոցի հետևյալ կարևոր պահանջները բավարարելու նպատակով.

1. Հին գրական երկերի ուղղությամբ կատարվող բանասիրական աշխատանքի պահանջով՝ այդ երկերում հանդիպող անծանոթ բառերը բացատրելու, բնագրերի բովանդակությունը բնթերցողներին մատչելի դարձնելու համար:

2. նորահայտ գիտական աշխատությունների մասնագիտական բառերն ու տերմինները բացատրելու նպատակով: